№ 131 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 15 ՅՈՒՆԻՍԻ

ԹԻՖԼԻՍԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Տարեկան | 10 ռուբ. |
| Կէս տարին | 6 ռուբ. |
| Ամսական | 1 ռուբ. |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Տարեկան | 12 ռուբ. |
| Կէս տարին | 7 ռուբ. |

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին։

Յունիսի մէկից մինչև տարւայ վերջը արժէ 7 ռուբլի։

ԱՌԱՆՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և նամականիշով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան ԱՆՀՈՏԵՒԱՆՔ.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 15 ՅՈՒՆԻՍԻ № 131

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ.—1-ին երեսի վրայ տողին (պետիտ) 15 կոպ., Կովկասից դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես. 10 կոպ., Կովկասից դուրս 15 կոպ.։

ԱԶԱՏ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 8—2 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6-8 ժ. երեկ.։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՈՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ. Редакція Газеты „Оризонъ". Сололакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57. Tiflis (Russie, Caucase). Rédaction „Horizon".

## ՕՐՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատի հիւսիսային մասի զանազան կէտերում յետ են մղւած գերմանական յարձակումները։ Լուցկի ուղղութեամբ և դրանից դէպի հարաւ դրութիւնն անփոփոխ է. Ծաւալելով Բուքովինայում ունեցած աջողութիւնները, ռուս զօրքերը մօտեցել են դէպի Տրանսիլւանիա տանող լեռնանցքներին։

Կովկասեան ճակատում յետ են մղւած թիւրքերի յարձակումները Տրապիզոնի ճակատամասում, Եփրատի աջ ափին, Ռևանդուզի վրայ և Բաղդադի ուղղութեամբ։

Վերդենի մօտ ֆրանսիացիները մասնակի աջողութիւններ են ունեցել։

Իտալական ճակատում աւստրիացիները յետ են քաշւում։ Իտալացիները նորից գրաւել են իրենց կորցրած դիրքերը և շարունակում են հետապնդել թշնամուն։

Վշտահար մայրը՝ Մարգարիտ Հէքէքեան, որդիները, փեսաները և թոռները հետ յայտնում է ազգականներին, ծանօթներին և բարեկամներին իր անմոռանալի որդու՝

ՀԱՄԱԶԱՍՊ ՇԱՀԻՆԵԱՆ ՀԷՔԷՔԵԱՆՑԻ

անակընկալ մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 12-ին՝ Միքայէլեան հիւանդանոցում։ Ցուղարկաւորութիւնը՝ Միքայէլեան հիւանդանոցից դէպի Խանդոյեան եկեղեցին առ. ժ. 10-ին։ Թաղումը նոյն օրը Խոջիվանքի գերեզմանատանը։
815 1—1

ՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ Է ԵՒ ԱՇՆԱՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գրական-ընկերական ամսաթերթ խմբագրական նոր կազմով։ Որը հայ հեղինակները այսու հրաւիրւում են աշխատակցութեան վարձատրութեան նախկին պայմաններով։

Գրերը ուղարկել՝ Петроградъ, Петроградская Сторона, Б. Проспектъ, 20, кв. 10. Ваану Тэріану.

Խմբագիր-հրատարակիչներ՝ Գ. Մանկունեան, Կ. Միքայէլեան, Վ. Տէրեան։
1008 3—3

...փոխւելով արտասահմանից

ԲԺԻՇԿ

ՇԱՀԲԱԶԵԱՆԸ

...ախկին ասսիստենտ Բեռլինի համալսարանի կլինիկաների,

...դէս կանանց հիւանդութիւն-... մանկաբարձութեան, կանանց ...ներքին օրգանների և նրանց ...ական հիւանդութիւնների, ըն-...ւմ է ամենայն օր, երեկ. ժամը ...նչև 7։ Հասցէ. Верійскій спускъ, домъ Меликъ-Азарьяна, кв. 19. Հեռ. 1—96։
50—40

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ

✦ ԲԺԻՇԿ ✦

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ

ՏԻՐՈՍԵԱՆ

Ներքին և կանանց հիւանդութիւնների։ Հիւանդներին ընդունում է առաւօտեան ժամը 8-ից մինչև 9-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։ Միխայլովսկայա փող., տուն Դրամբեանի։
553 50—19

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ.

ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը, ստամոքսի, կրծքի, թոքերի, ՍՐՏԻ և այլն, բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՈՎ. Թոքախտի, սրտի և ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորած ՌԵՆՏԳԵՆԻ ճառագայթներով։ Ամեն օր 9—1 ժ. բացի կիրակի օրերից։

Բեհբուտովսկայա № 23, հեռ. 7—94։
744 25—12

...ՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

...ՈՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

...ւ, կիւց, արծաթից, ֆարֆորից. ...մի հեռ. առանց ցաւի։ Արհեստ... ...ներ ոսկուց (առանց քիմքի) և ...ուսկից՝ կատարելագործւած մեթոդով։
...ռն. 10—2-ը ցեր., 4—7 երեկ.։
...ւնտովսկայա փող. № 1, մուտքը ...ւկից՝
936 100-66

...ԻՍԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ԱԿՈՒՄԲ

«Առաջին անսամբլ»

...որե-շաբթի, յունիսի 15-ին

...Հայ-դրամա-տիկական ... ընկերակցութիւնը, ղեկավարութեամբ ...Լազարեանի, մասնակցութեամբ ...ստայ միմիայն մէկ գաստրոլ, կը տրւի

...ՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ

...երգեր 4 գ., Թարգ. Ս. Մալխասեանի

...կցում են. օր.օր. Արեգ, Սրբունի, ... Վարդիկեր, պ. պ. Բաղդասարեան, ...եան, Ղազարեան, Թառեան, Սուլթանեան և այլք։

...ժ. 8½-ին—Տեղերի գները սովորական։

Ռեժիսոր՝ Ս. Թառեան

...ը ուրբաթ մեկնում է Ղարաքի... և Դիլիջան։
807 2—2

ՏՊԱՐԱՆ

„ՄԱՄՈՒԼ"

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

ՏՊԱՐԱՆԱԿԱՆ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՊԱՏՒԷՐՆԵՐ

Օտար լեզուներից պատւէրներ կատարւում են կանխավճար ստանալուց յետոյ։

Тифлисъ, Типографія „Мамулъ", Лорисъ-Меликовская, 22.

## ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

XI

Ներքին ճիգ

Բ.

Ընտանիք, մանկապարտէզ, դպրոց, այլ եւայլ ընկերութիւններ, հրատարակչագործունէութիւն, գրադարան-ընթերցարաններ, հրապարակային ու մասնաւոր դասախօսութիւններ... Ոչ մի միջոց չեն խնայում մեզ բախտակից ազգերը՝ իրենց սերունդները մայրենի լեզւով և ազգային ուղղութեամբ դաստիարակելու համար։ Եւ բախտակից ազգերի մէջ առաջին ու պատւաւոր տեղը այդ տեսակէտից պատկանում է, անտարակոյս, լեհերին. Նախ ընտանիքում, ապա դպրոցում ու հասարակական կեանքի մէջ՝ նրանք տենդային եռանդով արծարծում են իրենց հաւաքական արժէքների պաշտամունքը, որի շնորհիւ և կարողացել են աջողութեամբ մաքառել գերմանական ճնշման դէմ և բոլոր այլ ճնշումների դէմ։ 10—12 տարի առաջ քաղաքակիրթ աշխարհը ականատես էր մի չլսւած ու յուզիչ տեսարանի. 40,000 լեհ դպրոցական մանուկներ դասադուլ էին յայտարարել իբրև ցոյց-բողոք ընդդէմ այն ռէժիմի, որ կուզէր արմատախիլ անել լեհական լեզուն և որ պահանջում էր լեհ մանուկներից՝ արտասանել իրենց աղօթքը օտար բարբառով։

Այդպիսի սերունդներ են պատրաստում լեհ մայրերը։ Այդպիսի ոգով է կազմակերպւում ազգային դաստիարակութիւնը ընտանիքներում և դըպրոցում։

Տեղն է յիշել Նալբանդեանի խօսքը. «Սարա կէսը, կէսի կէսը գէթ երեխէք... Հայ մայրերին...

Լեհական արժանապատւութիւն չունենք ունենալ, բայց գէթ կարող ենք և պարտաւոր ենք հետևել լեհ դաստիարակչական մեթոդին։

Ուրիշ ճնշւած ազգերի մէջ ոչ միայն կազմակերպւում են ազգային պաշտպանութիւն զուտ տնտեսական հողի վրայ*), ոչ միայն դպրոցն ու ընտանիքը դարձնում են որրան հայրենասիրութեան և հպարտ ու առողջ քաղաքացիութեան, այլ և պրոպագանդի բոլոր միջոցներն են օգտագործում, բազմատեսակ ընկերութիւններ են հիմնում՝ իրենց ազգային արժէքները հաստատելու նպատակով։

Մի շարք ընկերութիւններ ունենք և մենք. Կ. Հ. Բարեգործական ընկերութիւն, Հայ Հրատարակչական ընկերութիւն, Հայ Գրողների ընկերութիւն, Հայ Գրասէրների ընկերութիւն, —վերջինը Բագւում։ Չնայած, սակայն, հիմնադիր և ղեկավար գործիչների ջանքերին՝ թոյլ ու դանդաղ են ընթանում գրեթէ բոլոր այդ ընկերութիւնները. չափազանց թոյլ է նրանց կատարած աշխատանքը հսկայական պահանջի հանդէպ։ Կ. Հ. Բարեգործականն եւ ստանձնել է—և լաւ է արել, որ ստանձնել է — իր յատուկ մարդասիրական պաշտօնից դուրս՝ նաև զուտ կուլտուրական առաքելութիւն (հրատարակչական - գրական-դպրոցական գործ), բայց թոյլ է անգամ Բարեգործականի շարժման տեմպը, չնայած նիւթական միջոցների յարաբերական առատութեան։ Ընդհակառակը, հարկաւ, միմիայն նիւթականի մէջ չէ։

Հրատարակչական ընկերութիւնը աւելի շուտ սաւեր է, քան գոյութիւն։ Այդպէս էր արդէն և պատերազմից առաջ։ Բագւի Հայ Գրասէրների ընկերութիւնը պատկանում է առ այժմ նոյն սաւերային կատեգորիային։ Նա ունեցաւ փայլուն դեբիւտ, Բրիւսովին Կովկաս բերելով և Բագւի մեծ դասախօսութիւնը կազմակերպելով։ Բայց այդ մեկուսի ձեռնարկից դուրս նրա գործունէութիւնն անցնում է դժգոյն, աննշմարելի. և նոյնիսկ Բրիւսովեան «անձնաւորեալ» օրերում, երբ Բագւի հայ բուրժուազիան բերանաբաց, ըղձայւած լսում էր խանդավառ ներբողներ հայ գրականութեան հասցէին, Գրասէրների ընկերութիւնը անկարող եղաւ օգտւելու վայրկեանի տրամադրութիւնից՝ իր նիւթական գոյութիւնը գէթ փոքր ինչ ամրացնելու համար։ Անհատ-ղեկավարը, որքան էլ եռանդուն ու ձեռնհաս լինի, չի կարող բաւել այդպիսի մեծ ու կարևոր ձեռնարկների պահանջներին և անհրաժեշտ է յանձնել գործի ղեկավարութիւնը կոլլեգիալ ու ազդեցիկ վարչութեան ձեռք։

Նոյնը պէտք է ասել և Հայ Գրողների ընկերութեան մասին, որ ունեցել է մի քանի տարուց ի վեր բաւական աշխոյժ գործունէութիւն, բայց որի թափը կոտրւած է հայ գրողների անհամերաշխութիւնից և կոլլեգիալ ղեկավարութեան բացակայութիւնից։

Կոլլեգիալ, հաւաքական ղեկավարութիւն չկայ, ըստ երևոյթին, և Կովկասեան Հայ Բարեգործական ընկերութեան մէջ, որ ունի այնքան ծաւալուն գործունէութիւն և այնքան մեծ ու պատասխանատու կոչում։

Բնական երևոյթ է—յատուկ և ամենառաջադէմ ազգերին—որ իւրաքանչիւր գործի մէջ չեղւում է այս կամ այն անհատը՝ իր արտակարգ եռանդով ու ինիցիատիւով, իր մտաւոր ընդունակութիւններով կամ բարոյական հեղինակութեամբ։ Սակայն ամենակատարեալ անհատ-ղեկավարն անգամ ենթակայ է վրիպումների և այդ իսկ պատճառով բոլոր կուլտուրական ազգերի մէջ անհատ-ղեկավարների կողքին հաստատւած են կոլլեգիալ մարմիններ, որոնք սոսկ ֆիկցիաներ չեն, այլ արթուն, ազդու, վերահսկող գործօններ։ Որքան աւելի անհրաժեշտ են այդպիսիները մեր կեանքում, ուր դեռ այնքան երերուն են կուլտուրական հաստատութիւնների խարիսխները, ուր անսովոր ճիգ է պէտք ազնիւ ու անաչառ լինելու համար, ուր բարքերը վաղուց ի վեր մշակւած են ամենավատթար եսականութեան փառախում, ուր ինտելիգենցիան, անգամ ամենատաղանդաւոր գրողներից ու գործիչներից շատերը դեռ գերի են մանր, հաճիմ կրքերի, փառամոլութեան, կեղծ ինտրիգի, նախանձի, չկամութեան...

Դեռ փոյթ չէ, երբ անհատ-ղեկավարը ունի ինտելիգենտ մարդու շնորհք, ունի ձեռնհասութիւն և անաչառութեան, արդարամտութեան ուժեղ բնազդ։ Զարհուրելի է, երբ կարևոր ու պատասխանատու գործի գլուխ պատահաբար, բախտի բերմամբ յայտնւում են—միահեծան ղեկավարի պաշտօնով—ըստ ամենայնի բացասական տիպի մարդիկ։ Եթէ կոլլեգիալ ղեկավարութեան ու պատասխանատւութեան սկզբունքը շատ թէ քիչ արմատացած լինէր մեր կեանքում, մենք պայտ կը լինէինք գէթ որոշ տիպի խմբագիրներից, որոնց մէջ բարոյական խեղճութիւնը հաւասարւում է մտաւոր աղքատութեան և որոնց սակայն երկար տարիներ հայ մամուլի օրգաններ են վարում... Լինէին նրանց հանդէպ կոլլեգիալ մարմիններ, խղճմիտ ու գրական ճաշակի տէր—գէթ փոքր ինչ կը սանձէին նրանց բացասական թափիչները և չէին թոյլ տայ տարիներ շարունակ պղծել հրապարակը և թունաւորել գրական բարքերը...

Միք. Վարանդեան

*) Վաղուց է, որ բիսմարկեան քաղաքականութիւնը ձգտում է ջախջախել լեհական կուլտուրայի ազդեցութիւնը Պոզնանում, լեհ հողատէրերի կալւածները գնել և գերման ուժեր գաղթականութիւն հաստատել, բայց այդ յամառ ձգտումները ցարդ ունեցել են միշտ լեհ ազգի նոյնքան յամառ դիմադրութեան և խորտակւել։

## ԼԵԶՈՒԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

(Գործնական առաջարկ)

Մեր լեզուի պաշտպանութեան համար շատ գրւեց։ Զանազան կողմերից պարզաբանւեց այդ խնդիրը. բայց, իմ կարծիքով, մի գլխաւոր և կարևոր կողմ աչքաթող է արւում։

Մեր լեզուի պաշտպանութեան և մշակման գործում մեր առևտրական և արդիւնաբերական հաստատութիւններն էլ դեր ունեն։ Բոլոր, քիչ թէ շատ կանոնաւոր, առևտրական հիմնարկութիւնները ունին կամ պարտաւոր են ունենալու հաշւապահութիւն և առևտրական թղթակցութիւններ. Ինչու այդ բոլորը մայրենի լեզւով չվարել։

Ով ծանօթ է մեր վաճառականական աշխարհին, նա անշուշտ նկատած կը լինի, որ հաշիւները պահւում են ռուսերէն (Աստւած ռուսերէն հաւարի) կամ վրացերէն (Թիֆլիսում) մի վերին աստիճանի քաօսային գրութեամբ։ Յաճախ կը լսէք ու կը կարդաք կէս-աղաւաղւած ռուսերէն, կէս-հայերէնանման դարձւածքներ միաժամանակ։

Հնարաւոր չէ՞ արդեօք, հենց վաճառականների ընկերութեան մէջ այդ հարցը քննութեան առնել, մանաւանդ որ մայրենի լեզւով հաշւապահութիւն մի քանի հայ խոշոր առևտրական տներում վարւում է։ Մենք հաստատ գիտենք, որ յիշեալ առևտրական տներում գրքերը գրւում են մաքուր հայերէնով, թղթակցութիւնները նոյնպէս։ Յաճախ է պատահում, որ գաւառացի որևէ վաճառական ստիպւած է լինում նամակները ռուսերէն գրել և, օրինակի համար, որպէսզի արտայայտած լինի հայկական ասացւածքը՝ «այստեղ մի եւ կայ», այսինքն որևէ արգելք կամ անպատեհ բան կայ, ռուսերէն գրում է՝ „здѣсь адинъ и эоть" (արտագրում եմ բնագրից տառացի)։

Եւ ահա մի ասպարէզ, ուր մեր ինտելիգենտ աշխատաւորներից շատերը պաշտօն կունենան և գործ — կատարելու։

Առհասարակ առևտրական գրքերը մայրենի լեզւով վարելը, բացի «ազգասիրական քայլ» լինելուց՝ մի անհրաժեշտութիւն է առևտրական որոշ նկատառումներով։ Ինչ վերաբերում է հաշւապահական տերմիններին՝ ի վիճակի եմ յայտնելու, որ իրենց գրքերը հայերէն վարող մեր յիշած առևտր. խոշոր տների գրասենեակներում բաւական մշակւած են այդ տերմինների հայերէն ձևերը և շատ յաջող գործ են ածւում։

Աւելորդ չէր լինի այս մասին լուրջ մտածել։

Գործակատար

## „ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Սալմաստ, 2 յունիսի

Այս օրերս տեղս հասան տեղահանւած հայերից 200 հոգի, որոնց Ռևանդուզի ճակատամարտի ժամանակ աջողւել է փախչել Նեհրիից (Շամդինան)։ Միաժամանակ Ուրմի են հասել ուրիշ մօտ 200 հայ։ Դրանք մեծ մասամբ կանայք և աղջիկներ են։ Տեղահանւած են եղել Բաշկալէի շրջանից։ Քիւրդ չէյխերը և թիւրք ասպաները մեծ մասը վաճառած են եղել շրջանի բէգերին։ Ազատւածների ասելով, Նեհրիում գտնւած հայ կանանց և աղջիկների թիւը 1000 հոգուց աւելի է եղել։ Կռիւը բռնկւած ժամանակ քիւրդերը նրանց մեծ մասը տեղափոխել են Մուսուլի կողմերը։ Զարհուրելի գազանութիւններ են կատարել։

Առ. Յար.

Սարիղամիշ, 8 յունիսի

Ամսոյս 6-ին այստեղ հասան Քաղ. Միութեան կողմից և Մոսկ. Հ. կոմիտէի երրորդ խմբի Սասունի, Մուշի և Խնուսի շրջաններից հաւաքւած 164 որբեր, գլխաւորապէս տղաներ։ Առաջին իսկ հայեացքից նկատելի են Սասնոյ «ճծծերի» համարձակ, աչքաբաց շարժումներն ու ինքնավստահ արտայայտութիւնները. սարկութեան և ոչ մի գիծ։ Եկան և Բաշ-Գիւղի 22 որբերը, որոնց փոխադրում են Ալեքսանդրապոլի որբանոցը իրենց կառավարչի և կառավարչուհու հետ միասին։

Ցիշեալ 164 որբերից 124-ը Քաղ. Միութեան հաւաքածներն են. այդ խմբից ճանապարհին մեռել է մէկը, հիւանդութեան պատճառով Բաշ-Գիւղում թողնւած են երկուսը, իսկ մինչև տեղս հասնելը հիւանդացել են կրկին 7-ը։ Մինչև այժմ ճանապարհների վրայի հիւանդանոցները կանոնաւորւած չեն և, ինչպէս երևում է, մի տեղ դեղն է պակասում, միւսում բժիշկն է բացակայում, բայց լրագրների զեկուցումների մէջ ասում են, որ ամեն ինչ կարգին է։

Կրկնում ենք, Սարիղամիշում անհրաժեշտ է գաղթականութեան համար յատուկ հիւանդանոց, որովհետև բաւական չէ միայն մի բժիշկ Կարապետեանի բարի տրամադրութիւնը և սրտացաւ վերաբերմունքը։

Տէր-Տանեան

Էրզրում, 6 յունիսի

«Հորիզոն»-ի № 116-ում հաղորդած էի, որ Մամախաթունում կան 50-ի չափ փախստականներ։ Նախ քան Մամախաթունը թիւրքերի ձեռքն անցնելը՝ այդ 50 հայ փախստականները ողջ և առողջ հասան Էրզրում և ներկայումս դրանցից շատերը գտնւում են Էրզրումի շրջանի գիւղերում։ Դրանք գլխաւորապէս դերջանցիներ են։

Գարեգին

Երեւան, 7 յունիսի

Հաստատ աղբիւրից հաղորդում են, որ յայտնի բարեգործ պ. Տիգրան Աֆրիկեանը Անւոյ պեղումներին յատկացրել է տարեկան հազար ռուբլի։

— Այսօր Վան ուղևորւեց Ջուլֆայից ակադեմիկ Մառի Հայաստանը ուսումնասիրող արշաւախումբը։

Ա. Վռոյր

Էջմիածին, 10 յունիսի

Այս օրերս իր թեմը մեկնեց Շամախու թեմի նոր նշանակւած առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարեանը։

— Քաղաքների Միութեան տեղիս բաժանմունքի նախագահ է ընտրւած Բագրատ եպիսկոպոսի փոխարէն Արսէն վարդապետ Ղլտճեանը։

— Մօտ օրերս տեղի ունեցաւ վարդապետական ձեռնադրութիւն. վարդապետ են ձեռնադրւած նախկին Իսահակ սարկաւագ Տէր-Ղազարեան և Արշակ սարկաւագ Դաւթեան։

Ա-ցի

## ՊԱՐՍԿՈՒՀԻՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Թեհրան, 15 մայիսի

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանում կրթական գործի մենաշնորհը, ի սկզբանէ անտի կղերի ձեռքումն է գտնւել։ Ահա ու մութ մադրասէներում մոլլան ճիպոտով ու ֆալախկայով կրօնական գրքերի դժւարըմբռնելի յօդւածները ուժով խցել երեխաների մանուկ ուղեղն է աշխատել մտցնել։ Այդ տիպի մադրասէներ այժմ էլ դեռ տիրապետող են և բազմաթիւ ոչ միայն գաւառներում, այլ և մայրաքաղաքում։

Ժամանակին հերոսական ջանքեր ու մեծ աշխատանքներ են գործադրւել, մինչև որ կարելի է եղել կրթական մենոպոլիան կղերի ձեռքից խլել և եւրոպական տիպի դպրոցի հիմքը դնել։ Հակառակ շահերի և պալատականների հովանաւորութեան, կրօնական ֆանատիկոսութիւնը յաճախ է բորբոքւել նրանց դէմ. մոլլաներից թելադրւած ամբոխը յաճախ է քարուքանդ արել «անհաւատ դպրոցները» և կրակի մատնել նրանց գոյքը։ Շատերը կրթական առաջնորդներից ստիպւած են եղել կեանքը փրկելու համար թաքնւել կամ փախուստ տալ։ Նրանցից շատ քչերն են այլ վայրերում փորձել իրենց կրթական վերածնունդի փորձը։

Սրանց եռանդուն ջանքերի շնորհիւ պատրաստւած հողի վրայ հիմք են դրել նախ բողոքական, ապա և կաթոլիկ միսիոնարները, որոնց դպրոցներում սկզբում միայն քրիստոնեայ և հրէայ աշակերտներ են ընդունւել եղել։ Նոր գաղափարի ազդեցութեամբ նրանց դպրոցներում քիչ-քիչ պարսիկ-

digitised by A.R.A.R.@

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 15 յունիսի

### ԴԱՏ ԱՐԷՔ

Եղբայրական Օգնութիւնը ունի Իգդիրում իր լիազորը—պ. Սահակ Մատինեան։ Երկու տարուց ի վեր պաշտօնավարում է, ասում են, ձրի։ Ամիսներից ի վեր գանգատներ են, որ տեղում են այդ լիազորի դէմ—թէ բնիկ և թէ գաղթական հայերի կողմից։ Գանգատւում են հեռագիրներով ու աղերսագրերով, գանգատւում են և պատգամաւորութիւններով, դիմում են շարունակ Էջմիածին, Երեւան, Թիֆլիս, մեղադրում են պաշտօնեային ամենածանր յանցանքների մէջ, պահանջում են դատ, քննութիւն։

Ոչ մի արձագանք։ Զաքարէական պապանձում—թէ Եղբայրականի գրասենեակում և թէ Երեւանի առաջնորդարանում։ Մարդիկ ճարահատեալ դիմում են մամուլին։ Մի քանի անգամ դիմումն եղաւ մեր խմբագրութեան։ Պատգամաւորները խնդրում էին, որ «Հորիզոն»-ի խմբագիրը անձամբ երթայ քննութիւն կատարելու։ Հասկացրինք, ի հարկէ, որ այդ իրաւունքը պատկանում է «Եղբայրական Օգնութեան»։ Եւ այդ իմաստով էլ հրատարակեցինք ժամանակին «Հորիզոն»-ի պոստարկղի մէջ մի ազդարարութիւն։

Այդ պատասխանը, սակայն, չգոհացրեց գանգատաւորներին։ Չգոհացրեց, որովհետեւ Եղբայրական Օգնութիւնը յամառօրէն շարունակում է լուռ ու մունջ մնալ։

Երեւանի առաջնորդ Խորէն եպիսկոպոսը միայն խոստացել է մի քանի անգամ պատգամաւորներին՝ Իգդիր գնալ և անձամբ քննել Մատինեանի գործը, բայց և ամեն անգամ որեւէ պատրւակով հրաժարւել է կատարելու խոստումը։ Ինչո՞ւ է ձգձգում սրբազանը։ Ինչո՞ւ են շարունակ խուլ ականջ անում Եղբայրականի ղեկավարները։

Թող հասկանան, վերջապէս, որ հասարակութիւնը չի կարող հանդուրժել այդ անվերջ ու յանցագործ գանցառումները։ Թող ըմբռնեն, որ լռելով՝ իրենց են վարկաբեկում և ամբողջ գործն են վտանգում։

Եղբայրական Օգնութեան Էջմիածնի ու Երեւանի մարմինները պարտաւոր են քննել իրենց հասած գանգատները, պարտաւոր են պաշտպանել իրենց լիազորի պատիւը։ Եթէ այդ վերջինը իրօք արատաւորուած է, եթէ իրօք տեղի են ունեցած գանգատաւորների մատնանշած զեղծումները, յանցաւորը պէտք է քաւէ, ով որ էլ լինի նա։ Սխալւում են չարաչար Իգդիրի հայրենակիցները, ենթադրելով, որ իբր Հորիզոնի խմբագրութիւնն ա «ծածկել» է ուզում Մատինեանին, իբրեւ որոշ հոսանքի պատկանող մարդու։ Վատնը կան բոլոր հոսանքների մէջ և եթէ քննութիւնը մեղադրական դատավճիռ արձակէ Մատինեանի դէմ, մենք առաջինը անարգանքի սիւնին կը գամենք յանցաւորին։ Պատժել ենք միշտ այդպիսիներին նոյնիսկ սեփական շարքերում և պատժելիս խտրութիւն իսկ չենք դրել միջոցների մէջ։

Մենք չենք թոյլ տայ, որ անարժան մարդիկ—թէկուզ սիրուն տիտղոսներով—իրենց յանցաւոր շահատակութիւնները ծածկելու համար, ապաւինեն այս կամ այն հոսանքին ու գաղափարական խմբակցութեան։

Այս սեւ ու արիւն օրերում ժողովրդական վստահութիւնն ի չարը գործ դնել և ժողովրդի հաշւին հարստանալ ու վայելելը համահաւասար է ամենածանր դաւաճանութեան։ Թող լաւ գիտակցեն այդ՝ բոլոր ինտելիգենտ Կալիբանները, որոնք այսօր, քաջալերւած ընդհանուր տակնուվրայումից, լոյս են ընկել զանազան վայրերում իրենց գիրուկ պաշտօններով ու շղթայազերծ ախորժակներով։

Կոնտրօլ ենք պահանջում մի անգամ եւս մեր հեղգ, թուլամորթ կօմիտէներից. կոնտրօլ ու դատ ենք պահանջում գէթ այն մարդկանց վրայ, որոնց դէմ ոռնում է հասարակական վրդովւած խիղճը։

---

երեխաներ էլ են յաճախել։ Ժամանակի ընթացքում սրանց թիւն այնքան բազմացել է, որ այժմ նրանք ճնշող մեծամասնութիւնն են կազմում։

Միսիոնարներն իրենց այդ յաջողութեան համար պարտական են սահմանադրութեան, որ—թէկուզ ժամանակաւորապէս—այլ արժէքների հետ թուլացրեց հոգեւորականութեան տիրապետութիւնը և աշխատեց զարկ տալ կրթական գործին։

Մէջլիսի կրթական օրինագծի որոշումից յետոյ եւրոպական տիպի դպրոցները հսկայական քայլերով յառաջդիմութիւն սկսեցին և օրէցօր բազմացան։ Տղայոց դպրոցների հետ միասին սկսեցին զարգանալ նաև աղջիկների դպրոցները։ Այն հանգամանքը, որ Մէջլիսից բացի այսպիսի դպրոցները հովանաւորւում էին ժամանակի իշխողների կողմից (Սըփահտարն իր միջոցներով աղջկանց մի դպրոց հիմնեց), թոյլ չտւեց անզօրացած հոգեւորականութեան այդ հրաշքի դէմ պայքարելու բացարձակօրէն։

Ուժեղացաւ նաև դէպի բողոքական միսիոնարների աղջկանց դպրոցը մտնելու հոսանքը։

Այսպիսով կրթական վերածնունդն այնքան հիմնաւորւեց, որ դպրոցական հաստատութիւնները չզլացեցին հրապարակական քննութիւններից, նոյնիսկ աղջիկների դպրոցում։

Դրա առաջին օրինակը տւեց բողոքականների դպրոցը։ Հետաքրքրական է տեսնել աւարտող աշակերտուհիներին քօղով ծածկւած կամ վարագոյրի յետեւից աւարտական ճառեր արտասանելիս։

Մի քանի օր առաջ, այդ դպրոցում ... աւարտական քննութեան հանդէսը։ Այս տարի աւարտում են 5 պարսկուհի, որոնք նոյն կարգով աւարտական ճառեր ասացին։ Հետաքրքրական էր մանաւանդ նրանցից մէկի ճառը «Պարսկուհու սոցիալական դրութեան մասին»։ Սարկական վիճակի, ինքնուրոյնութիւնից զուրկ լինելու և կաշկանդումների դէմ ազդու կերպով բողոքող ճառախօսուհին խօսում էր դէմքը քօղով ծածկած...

Այդուհանդերձ, այդ բողոքը արտայայտում էր մի գիտակցութիւն, որը քիչ-քիչ պիտի զարգանայ և Իրանի իրական վերածնունդի հիմքը կազմի։

Այդ գիտակցութիւնն զարթեցնելու համար են աշխատում նաև պարսկուհիների այն երկու թերթերը,—փոքրիկ, խակ յօդւածներով խմբագրւած,—որոնք երբեմն-երբեմն երեւում են հրապարակի վրայ, թէև 15-օրեայ պարբերական անունն են կրում։

Մտքերը խմորւած են, կաշկանդումներից ազատւելու գաղափարը մուտք է գործել դարաւոր սարսուկների մէջ և այդ ուղղութեամբ գնահատելի աշխատանքը սկսւած է, որը օրէցօր նոր նւաճումներ է անում։

Սահմանադրութեան ժամանակ մի քանի տիկինների նախաձեռնութեամբ յատկապէս պարսկուհիների համար բացօդեայ զբօսանքներ էին կազմակերպւում, որ զւարճութեան հետ զուգընթաց՝ թեթև դասախօսութիւններ էլ էին լինում։ Քաղաքական խառն և անկայուն վիճակը դադարեցրին գեղեցիկ այդ ձեռնարկները։ Ներկայումս, որ կեանքը քիչ-քիչ նորմալ ընթացքի մէջ է մտնում, թւում է թէ նորից կը վերսկսւեն նրանք։

Այս անգամ այդ գործի նախաձեռնողը հանդիսանում է Հայուհեաց Բարեգործական ընկ., որ առաջիկայ հինգշաբթի օրը, հայոց դպրոցի սրահում կազմակերպում է պարսկերէն ներկայացում յատկապէս պարսկուհիների համար։ Ինչպէս բոլոր աշխատողները, նոյնպէս և դերակատարները կանայք են լինելու։ Տղամարդկանց դերերը նոյնպէս կանայք են խաղալու։ Ներկայացումը տրւում է ամերիկեան դեսպանի ամուսնու հովանաւորութեամբ։ Այս առաջին փորձից յետոյ, երեւի պարսկուհիների մէջ էլ նախաձեռնողները կը գտնւին և կրթական մի այլ հաստատութեան — թատրոնի — միտքն էլ մուտք կը գործի նրանց մէջ։

Պարսկուհիների իրաւական դրութեան տեսակէտից անհրաժեշտ է չեղնել այն վերաբերմունքը, որ ունի կառավարութիւնը յանձին լուսաւորութեան մինիստրի։ Բարեացակամ այդ վերաբերմունքի արտայայտութիւն է այն որոշումը, որով 6-դասեան բոլոր աղջկանց դպրոցներն այսուհետեւ հրապարակական քննութիւն պիտի տան, ուրիշ խօսքով՝ բողոքական միսիոնարների աղջկանց դպրոցի բացառիկ օրինակը պարտադիր ընդհանուր է յայտարարւում։

Նոյն մինիստրի ծրագրով նախապատրաստութիւններ են տեսնւում հիմնելու առաջին պետական կանանց հիւանդանոցը։ Տեղն արդէն որոշւած է, շուտով կը յամարեցւի հիւանդանոցի։ Ցանկութիւն կայ Եւրոպայից մի քանի կին բժշկուհիներ հրաւիրել յատկապէս այդ հիւանդանոցի համար։

Իլ.

---

# ՊԱՏԵՐԱԶՄ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

### ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

13 յունիսի

Արեւմտեան ճակատ.— Եակոբշտադի և Դւինսկի դիրքերի մի քանի մասերում եռուն թնդանօթաձգութիւն է տեղի ունենում։ Գորոդիշչէ աւանի հարաւային շրջանում Բարանովիչից դէպի հիւսիս, յունիսի լոյս 12-ի գիշերը, Սկրոբովա գետակի մօտ մեր խրամատները ուժեղապէս ռմբակոծելուց յետոյ, թշնամին յարձակման դիմեց, բայց յետ մղւեց։ Միեւնոյն ժամանակ Սլուցկու խճուղու վրայ թշնամու մի խումբ փորձում էր մօտենալ մեր խրամատներին լուսադէմին, բայց յետ մղւեց կրակով։ Վիգանովի լճի հիւսիս-արեւելեան կողմը երեք աւստրիական գերմանացիները յարձակման դիմեցին Լիպսկ աւանի հարաւ-արեւմտեան կողմը 5 վերստ վրայ գտնւած ագարակի դէմ, բայց յետ մղւեցին։ Օրւայ ժամը 12-ին թշնամին նորոգեց այստեղ յարձակումը աւելի լայն ճակատի վրայ և ծանր թնդանօթների աջակցութեամբ։ Երեկ աւստրիական պոդպորուչիկ Կւասով և ենթասպայ Ալյադեվիրով օդաչուները ընկան հերոսական մահով։ Ստիր գետի վրայ Կոլկիից մինչեւ Սոկուլ գերմանացիները շարունակում են ռմբակոծել մեր խրամատները ծանր թնդանօթներով, տեղ-տեղ մասնակի յարձակման դիմելով, բայց ամեն տեղ յետ են մղւում։ Կրկնակի յարձակումները թանձր շղթաներով Լիննևկայի շրջանում (Ստոխոդ գետի վրայ) յետ են մղւած մեր կրակով. ընդ-ամին մեր մի վաշտ հետապնդեց թշնամուն մօտ կէս վերստ և գերի վերցրեց 45 գերմանացի 1 սպայի հետ։ Լուցկի ուղղութեամբ և դրանից դէպի հարաւ փոփոխութիւններ չկան։ Թշնամու մասնակի յարձակումը Զատուրցիի վրայ յետ է մղւած։ Դնեստրի վրայ Բուչաչից դէպի հարաւ Դոնի կազակները կռւով անցան գետից Սնովիդուվի մօտ և, տապալելով թշնամու առաջաւոր զօրամասերը, գրաւեցին Սեկերցին և Պետրովս գիւղերը, գերի վերցնելով 5 սպայ և 350 զինւոր։ Կիմպոլունգի շրջանում մեր հեծելազօրը կռւով գրաւեց թշնամու դիրքը Պոզորիտայի մօտ (Կիմպոլունգից 8—10 վերստ հեռու դէպի արեւմուտք)։ Ըստ լրացուցիչ տեղեկութիւնների՝ Գուրա Հումորա—Ռաչկա երկաթուղու վրայ Մոլիտ և Ֆրումոսա կայարաններում մեր ձեռքն են ընկել աւստրիացիների թողած փայտեղէն նիւթերի մեծ պահեստներ և 31 վագոն։ Այսպիսով դէպի հարաւ շարժւելով, մենք մօտեցել ենք դէպի Տրանսիլւանիա տանող լեռնանցքներին։

Կովկասեան ճակատ.—Թիւրքերի գիշերային յարձակումները Տրապիզոնի ճակատամասի վրայ Պլատանայի և Ջիւիզլիկի շրջաններում յետ են մղւած կրակով և տեղ-տեղ ձեռնամարտերով։ Եփրատ գետի (Մուրադ-չայ) թիւրքերը լուսադէմին յարձակման դիմեցին և գրաւեցին Նուրիկ գիւղի շրջանում գտնւած բարձունքը, բայց կէսօրի մօտերքը դուրս քշւեցին այնտեղից։ Հիւսիսային Միջագետքում թշնամին, թնդանօթային նախապատրաստութիւնից յետոյ, յարձակման դիմեց Ռևանդուզի վրայ և գրաւեց մեր դիրքի մի մասը, բայց յետոյ յետ շպրտւեց մեր սւինային հակայարձակումով, թողնելով մեր ամրութիւնների մօտ սպանւածներ և վիրաւորներ՝ Բաղդադի ուղղութեամբ թշնամու առաջխաղացումը հեշտութեամբ զսպւում է մեր զօրքերի կողմից, որոնք մեծ կորուստներ են պատճառում թըշնամուն։

—

ԿԻԵՒ, 12 յունիսի.—Հասաւ մի քանի հազար աւստրիացիների հերթական պարտիան։ Նրանց մինչեւ մեծ տոկոսը կազմւում են 2—3 օր առաջ ռազմաճակատ եկած նոր կազմաւորումների երիտասարդ զինւորներից։ Դրանից առաջ նրանք մի փոքր դադար են առել Լւովում։ Նրանց ասելով, Լւովի բնակիչների մէջ ուժեղ յուզում է տիրում։ Աւստրիացիները փութով թողնում են քաղաքը։ Ռուբլու կուրսը բարձրացել է։

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

ՓԱՐԻԶ, 12 յունիսի.— Ֆրանսիական պաշտօնական հաղորդագրութիւն։ Մասայի ձախ ափին գերմանական գրոհը, որ ուղղւած էր Մորտոմի հարաւային լանջերի մեր խրամատների դէմ, կասեցւեց մեր կրակով։ Մասայի աջ ափին կռիւները շարունակւում էին գիշերւայ ընթացքում Տիոմոնի ամրութեան ճակատամասում։ Ֆրանսիացիները հակայարձակումով գրաւեցին այդ ամրոցից դէպի արեւմուտք գերմանական խրամատների մի մասը։ Ֆրանսիացիները ձեռնառումբերի օգնութեամբ մի քիչ առաջացան Ֆլեօրի գիւղում։ Միւս ճակատներում շարունակւում էր ուժեղ ռմբակոծութիւնը, առանց հետեւակազօրքի մասնակցութեան։ Լոտարինգիայում գերմանական մի ուժեղ հետախուզիչ խումբ ցրւեց Շեմինօ անտառում, Պոնտ-ա-Մուսոնից դէպի հիւսիս-արեւմուտք։ Վոգեզներում Սաւայի հովտի դիրքերի վրայ յարձակւելու գերմանացիների փորձն անյաջողութեան մատնւեց։ Յունիսի 12-ի լոյս գիշերը գերմանական աէրոպլանները ռումբեր ձգեցին Լիւնևիլի, Բակկարայի և Սեն-Դիէի վրայ՝ աննշան վնասներ հասցնելով և վիրաւորելով մի քանի երեխաներ, որ նկատի առնւեց փոխարէնը հատուցանելու համար։

ՓԱՐԻԶ, 13 յունիսի. — Ֆրանսիական պաշտօնական հաղորդագրութիւն։ Ֆիլմորտ փոքր դիրքը գրաւելու համար թշնամու գրոհի փորձը յետ վանւեց ձեռնառումբերով։ Մասայի ձախ ափին թնդանօթաձգութիւն է, առանձնապէս ուժեղ Մորտոմի շրջանում։ Աջ ափին, Տիոմոնի ամրութիւններից դէպի արեւմուտք դիրքերի վրայ գերմանացիների գրոհը չաջողւեց, շնորհիւ հետեւակազօրքի գնդացրաւոր կրակին։ Ֆլեօրին և Լըշեննուա անտառների միջեւ մենք գրաւեցինք թշնամու խրամատների մի քանի մասեր։ Միւս ճակատամասերում արտիլերիական գործունէութիւն կայ։ Մնացած ճակատի վրայ հանգիստ է։

### ՖՐԱՆՍԻԱ

ՓԱՐԻԶ, 11 յունիսի. — Պատգամաւորական պալատում վերջացան վիճաբանութիւնները յուլիսի, օգոստոսի և սեպտեմբերի ժամանակաւոր բիւջէի մասին։ Սոցիալիստների անունից Պիեր Ռընօդէլն յայտարարեց, որ սոցիալիստները պիտի քւէարկեն այդ վարկերը՝ ապահովելու համար հայրենիքի յաղթութիւնը։ Բրիզոնը իր և իրեն հետ Ցիմմերւալդի սոցիալիստական համագումարին մասնակցած Ռիֆֆենդէլի, Ժանի և Բլանի անունից կարդաց մի յայտարարութիւն, որի մէջ պարզւում են այն պատճառները, որոնցով նրանք քւէարկելու են պատերազմական վարկերի դէմ և խաղաղութիւն կնքելու օգտին՝ առանց որեւէ տերրիտորիալ և ի նպաստ անմիջական զինադադարի (աղմկալի բողոքներ)։ Պալատի նախագահ Դեշանելը արտասանեց, որ ոչ Ֆրանսիան ամբողջովին և ոչ որեւէ ֆրանսիացի առանձնապէս չեն կարող թոյլատրել անմիջական զինադադարը և հաշտութեան կայացումը, քանի որ դա կը նշանակէր հրաժարւել կռւելուց՝ իրաւունքի կրկնակի խախտումների դէմ։ Ժամանակաւոր բիւջէն ընդունւեց մեծամասնութեամբ 512 քւէի, ընդդէմ 3-ի։

### ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՌՈՄ, 13 յունիսի.—Հաղորդագրութիւն իտալական գլխաւոր շտաբի։ Թշնամին չկարողանալով գրաւել մեր պաշտպանողական ամրութիւնները, մեր յարձակման ուժեղ ճնշման տակ ստիպւեց նահանջել Մանդրիէլէի ճամբաների հանգոյցի վրայ։ Կաստելնուովո, Չեզլատէ, Գոբա, Լանգերա, Գալլիո, Ազիագո, Չեզունա, Մոնտէ Ձենջիօ դիրքերը վերստին գրաււեցին մեր կողմից։ Ուժեղ յարձակումն ու թշնամուն հետապնդելը շարունակւում են։

### ԾՈՎԻ ՎՐԱՅ

ՓԱՐԻԶ, 12 յունիսի.—Յունիսի 10-ի առաւօտեան իտալական «Ցիտտա-դի-Մեսսինա» օժանդակ յածանաւը սուզանաւի կողմից ընկղմւեց Օտրանտո նեղուցում։ «Փուրչ» հականաւը, որ ընկերակցում էր յածանաւին, յարձակւեց սուզանաւի վրայ, որ փախաւ։ Մի քիչ ժամանակ յետոյ նոյն շրջանում հականաւը ինքը ականի յարձակման ենթարկւեց և ընկղմւեց։ Յաջողւեց ազատել նրա համարեա բոլոր մարդկանց։

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՄԵՔՍԻԿԱ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 յունիսի. — Վիլսոնի և պետական քարտուղար Լանսինգի միջեւ տեղի ունեցած խորհրդակցութիւնից յետոյ Միացեալ Նահանգների կառավարութիւնը Մեքսիկայի կառավարութեանը մի յայտագիր ուղարկեց, որով պահանջում է անյապաղ ազատ արձակել Կարրիզալում ձերբակալւած զինւորներին և յայտարարում է, որ Մեքսիկան ճշտիւ ձեւակերպի ամենամօտիկ ապագայում քաղաքական այն կուրսը, որին նա վճռել է հետեւել։

## ՄԱՄՈՒԼ

Թիֆլիսի զեմստւային խորհրդակցութիւնը տարօրինակ տպաւորութիւն է թողել ոչ միայն մայրաքաղաքների, այլև Ռուսաստանի գաւառական մամուլի վրայ։ «Кіевская Мысль»-ը իր վերջին համարներից մէկում խօսելով Կովկասի կենտրոն համարւած Թիֆլիսի դերի, նրանում պատերազմի ընթացքում թանկութեան պատճառով առաջացած հացի, մսի ճգնաժամի մասին, ի միջի այլոց գրում է այդ քաղաքում սունկերի նման մէկ-մէկու ետեւից բուսնող Պարիզի մոդաների, կանանց գլխարկների և առհասարակ Կովկասի մայրաքաղաքի վարք ու բարքի, կենցաղի քասի վրայ, շօշափում է չարաչար ազգային և զեմստւային վերջին խորհրդածութիւնների խնդիրները։

Այդ արտաքին տպաւորութիւնների քաօսում հեշտութեամբ կարելի է գտնել շատ հետաքրքրական երեւոյթներ Կովկասի մայրաքաղաքի ներքին կեանքից։ Պատերազմը հեռու գնաց, միեւնոյն ժամանակ նա սովորական մի բան դարձաւ և նրա յուզւած կեանքը սկսեց վերադառնալ իր նախկին հունը։ Կովկասի ժողովուրդները վերադարձան իրենց սովորական խնդիրներին, վերսկսեցին իրենց նախկին կեանքը, որը մինչեւ պատերազմը կենդանի էր և բազմակողմանի։ Այդ կենդանութիւնը հետեւանք էր այն բանի, որ Կովկասի երեք գլխաւոր ազգութիւնները երբէք չկարողացան կարգաւորել իրենց կեանքն այնպէս, որպէս զի առանձին ազգութիւնների շահերի սուր ընդհարումներ չլինեն։ Իսկապէս ասած՝ այստեղ չի կարելի ասել—«չկարողացան», որովհետեւ այդ կեանքը ստեղծում էին նրանց համար ուրիշները։

Սակայն յօդւածագիրը պատերազմի սկզբներին չի նկատել այնպիսի սուր ազգային կռիւ. վերջը, երբ պատերազմը երկարատեւ է դառնում, ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս և այստեղ շատ խնդիրներ, որ թողնւած էին հրապարակ բերելու պատերազմից յետոյ, նորից երեւան եկան։ Օրինակ, Կովկասում

Հերթի էր դրւած Կովկասի նահանգներում և շրջաններում զեմստւօ մտցնելու հարցը։ Թւում էր, թէ այն հարցում պէտք էր անտես լոյսի յայտնւելը, ստեղծւած դրութիւնից դուրս գալու միջոցը։ Ժողովուրդներն իրենց իրենց կեանքը կարգաւորելու հնարաւորութիւն պէտք է գտնէին, պէտք է կարողանային իրենց շահերի սահմանները որոշել։ Կովկասի ժողովուրդները շահերի այսպիսի սահմանորոշման հիմք ունենալով էր, որ տեղի ունեցաւ 1905 թ. խորհրդակցութիւնը։ Այժմ սակայն ամեն ինչ այլ կերպ էր դասաւորւած.

Խորհրդակցութեան կազմը բաւականաչափ միապաղաղ էր, Հարցի քառասուն մասնակիցներից 37 վրացի էր, 24 հայ, 21 մահմեդական, 58 ռուս։ Վերջինի մէջ մտնում էին նահանգապետները և պրեզիդ... բոլոր անդամները (ինչպէս փոխ... արքայի խորհրդի կազմից, նոյնպէս Պետրոգրադի ներկայացուցիչներից) և քւէարկութիւններին չէին մասնակցում։ Վրացի պատգամաւորներ ներկայացուցիչներ էին Քութայիսի, Թիֆլիսի ազնւականութիւնների, վրացական գիւղատնտեսական ընկերութեան, ազնւականութեան ... մակերպութեան, մահմեդական պատգամաւորները բոլորն էլ խոշոր ... կեր և խաներ էին, հայերը բուրժուազիայի ներկայացուցիչներ էին, ռուսները—պաշտօնեաներ, ... պերատիւների և մի շարք ուրիշ աւելի դեմոկրատ կազմակերպութիւնների ներկայացուցիչներ չկային խորհրդակցութեան մէջ։ Պէտք է նկատել, որ ազգայնականութիւն հովւում է գլխաւորապէս տիրող ազգութիւնների վերին խաւ... կողմից։ Վրացական և մահմեդական ազնւականութիւնը միանգամայն ... բոզակի թշնամացել են հայ բուրժուազիայի հետ։ Այդ խաւերում ... գութիւնները բաժանող գծերը ... գիծում են Կովկասը տնտեսական ... դասակարգերի բաժանող գծին։ Ա... բողջ խոշոր հողատիրութիւնն ... տեղ վրացիների և մահմեդականների ձեռքին է, արդիւնաբերութ... և առեւտուրը՝ հայերի։

Խորհրդակցութեան կազմը ... է որոշէր նաև նրա բնաւորութիւնը։ Դժւար էր սպասել, որ ազգային դասակարգային շահերը այստեղ կը բռնէին աւելի բարձր կ... ների առաջ և խորհրդակցութեան բոլոր մասնակիցները միակերպ մտածէին Կովկասի և նրա ... բնակութեան շահերի մասին։

Աւելի պակաս յոյսեր կային, որ խորհրդակցութիւնը ազգային ... դիրքը կանոնաւոր հողի վրայ կը ... և ամենից առաջ կը շտապէր ... ձայնութեան գալ այն մասին ... ապագայ զեմստւօն նոր առիթ ... ներկայանայ աւելի խտացնելու ... գային ատելութիւնը։

Այդպէս էլ եղաւ։ Արդէն ... քան խորհրդակցութեան սկսւելը ... րացի և մահմեդական պատգամաւորները կուռ բլոկ կազմեցին ... քանի տատանումներից յետոյ ... բլոկին յարեցին պատգամաւոր... թւում եղած երկու-երեք ... սոցիալիստ-ֆեդերալիստները։ ... հարկէ, տարօրինակ երեւոյթ էր ... այստեղ մարդ դադարում է ... բանի վրայ զարմանալ։ Սոցիալ... ֆեդերալիստներին աւելի շուտ ... է անւանել ազգայնական-սոցիալ... իսկ ներկայ դէպքում նրանք ... ընդհանրապէս կասկածելի յ... թիւն ունեցող սոցիալիզմը ... էին թողել և խորհրդակցութեան ներկայացել ուղղակի իբրև ... գայնականներ։

Տեսարանը վերին աստիճանի ... շագրաւ էր։ Բլոկի որոշումները ... տուեցին «ծայր-երկրի անձնւէր... թիւնները համապատասխան ... րին» ընդհանուր սօուսի տակ, ... մասին վրացի ազնւականները ... ճախակի յայտարարում էին ... հրդակցութեան ժամանակ, իսկ ... րանց մամուլը բղաւում էր, ... հենց այժմ երեւում է, թէ ... սեպարատիստ։ Դա մի ակնարկ ... մի քանի հայկական շրջաններ ... մից առաջ մղած այն ծրագրի ... անհրաժեշտ է համարւում ... որոշել ազգայնական շահերը ... բաւորութիւն չտալ մահմեդական ... ազնւականութեանը՝ իր ձեռքն ... նելու հայ գիւղացիութեան գեր... տնտեսութիւնը։ Սոյն պահանջը ... պայման արդարացի էր և միշտ ... խորդ խորհրդակցութիւնների ... մանակ սկզբունքով ճանաչւում էր ... ամենքի կողմից օրինական, մանաւանդ երբ մահմեդականների և ... յերի միջեւ կայ սուր թշնամական յարաբերութիւն։ Իւրաքանչիւր ... գութիւն ստանում էր ներկայ ... քում համեմատական ներկայացուց... չութիւն։ Սակայն խորհրդակցու... թեան մէջ չգտնւեց այդ նախագծի ճշմարիտ պաշտպան, բացի ... հայ բուրժուազիայի ներկայացու... ցիչները ձգտում էին նոյնպէս ... պացուցել իրենց անձնւիրութիւն ... պետական շահերի նկատմամբ, ... միանգամայն անարգւած լինելով ... վրացական մամուլի կողմից, ... կի կարծում էին, թէ հայ աշխ... ւորութեան շահերը պաշտպան... անհրաժեշտութեան վերաբերեալ ... խագծի պաշտպանութիւնը կարող...

digitised by A.R.A.R.@

համարել սեպարատիզմ։ Ահա այդ երկիւղի տակ նրանք առաջ մղեցին մի ողորմելի պալլիատիւ—փոխանակ գաւառական զեմստւոյի երկու հայ-թիւրքական նահանգներում՝ համաձայնեցին շրջանային զեմստւոներ մտցնել։ Բանն այն է, որ ազգաբնակութեանը վարչական գիւղատնտեսական օգնութիւն հասցնելու գործը դժուար չի լինի, քանի որ այդ նահանգները բաժանուած են շրջանների՝ համապատասխան կուլտուրայի տեսակի (լեռնային և հարթավայր) և ազգաբնակութեան դասաւորութեան։ Սոյն պալլիատիւը հնարաւորութիւն տւեց երկու նահանգներում թէկուզ մասամբ ազգային շահերի սահմանները որոշել։

Աւելի մեծ եռանդով հայ պատգամաւորները պաշտպանում էին վերջին նիստում հարկային ցենզի և քաղաքները մանր զեմսկի միութիւնների վերածելու առաջարկները, քանի որ այստեղ նրանք հանդէս եկան ոչ թէ ժողովուրդի անունից, այլ իրենց դասի, որ պակաս կշիռ և արժէք չունի երկրի արտադրողական ուժերի զարգացման մէջ, քան ազնուականները։ Բայց ժողովրդի երկչոտ ազգային ցանկութիւնները և դասակարգի պայծառ տնտեսական կարիքները մերժեցին ազնուականների կողմից յամառօրէն պնդելով, որ խնդրում ենք հաւասարեցնել մեզ կայսրութեան հետ և տալ մեզ նրա զեմստւօն, ոչինչ աւելի մենք չենք ուզում։

Այսպիսով ուրեմն ընդունեց, որ երկիրը (Կովկասը) չունի ոչ մի առանձնայատկութիւն, բացի մէկից—հողատիրութիւնն այստեղ շատ մանր է և ցենզը հարկաւոր է իջեցնել...

Այնուհետեւ յօդուածագիրն անցնելով մեր երկրի առանձնայատկութիւններին, գտնում է, որ այստեղ կան դեսեատինը կոպէկներ արժեցող արօտներ, կան նաև դեսեատինը տասնեակ հազար ռուբլիներ արժեցող հողեր. սա մի երկիր է, որտեղ խիտ-տեսակ են ազգային շահերը և այնուամենայնիւ երկրի ներկայացուցիչները գտնում են, որ ոչինչով տարբեր չէ Ռուսաստանից։

Եւ այս բոլորը նրա համար է, աւելացնում է յօդուածագիրը,— որպէսզի Ռուսաստանում գործող զեմսկի կանոնադրութիւնը Կովկասում մտցնելիս, ամբողջ զեմսկի տնտեսութիւնն ընկնի վրացի և թաթար ազնուականութեան ձեռքը, զեմսկի կեանքից բոլորովին դուրս մնան ինչպէս հայ գիւղացիութիւնը, նոյնպէս և հայ բուրժուազիան։

Խօսելով ռուս և վրաց մամուլի այն չնչին մասին, թէ բլոկի հետ էին նաև ռուս պատգամաւորները, աւելացնում է.

Դրանք ռուս պաշտօնեաներ էին, որոնք, ի հարկէ, բնաւ չէին կարող տեղական տարրերից աւելի ձախ լինել, թէպէտ լինում էին մոմենտներ, երբ շատերն այդ պաշտօնեաներից հրաժարւում էին ձայնատւութեանը մասնակցելուց։

Մայրաքաղաքը քաղաքական բարձրութեան լիակատար քննութիւն տւեց։ Խորհրդակցութեան արդիւնքները կայացնեն շատերին, իսկ Մարկովները, փոխանակ խօսելու ծայրագաւառի սեպարատիզմի մասին, պէտք է շտապեն առաջարկել վրացի և թաթար ազնուականութեանը մտնելու միացեալ ազնուականութեան կազմակերպման մէջ։

Այս բոլորից յետոյ յօդուածագիրը գտնում է, որ խորհրդակցութեան յաջող ընթացք կազմը, նրա ակներև որոշ դասակարգային կազմակերպութիւնը այլարդիւնք չէր կարող տալ։ Վերջում առաջ է բերում վրաց դեմոկրատական «Թանամեդրօվէ Ազրի»-ի մէջ այս խորհրդածութիւնների վերաբերեալ և «Հորիզոն»-ի ընթերցողներին ծանօթ յօդուածից մի կտոր՝ ցոյց տալու իր ընթերցողներին, որ ազնուական պատգամաւորների վարմունքը այստեղ եւս գտել է իր գնահատումը։

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ

Դումայի հերթական նիստը տեղի ունեցաւ երկուշաբթի, ամսոյս 13-ին, նախագահութեամբ Ա. Խատիսեանի։

Խատիսեան յայտնում է, որ Վոլգա-Կամայի բանկի Թիֆլիսի բաժանմունքի նոր, սեփական շէնքը տեղափոխւելու առթիւ՝ նրա կառավարիչ, իրաւասու Մազմանեանը 1,000 ռուբլի է յանձնել քաղաքագլխին, որը իր հերթին այդ գումարից 500 ռ. յանձնել է պատերազմից վնասւածներին օգնող ընկերութեանը, իսկ 500 ռ. գաղթականներին։

Դուման շնորհակալութիւն է յայտնում։

### Ջրի հարցը

Երզնկեան հարցապնդում է անում վերջերս նկատուած ջրի պակասութեան մասին և ցանկանում է իմանալ քաղաքային վարչութիւնից, թէ ինչու բոլոր քաղաքամասերում ջուրը համահաւասար չէ ստացւում. օրինակ՝ Դիդուբէում ջրի պակասութիւնը աւելի սաստիկ է զգացւում, քան այլ քաղաքամասերում։

Այդ հարցապնդումը օրակարգի հարցի բնաւորութիւն է ստանում և զբաղեցնում է դումային մօտ ժամ ու կէս։

Խատիսեան երկար կանգ է առնում այդ հարցի վրայ. Նրա ասելով, ջրի պակասութեան խոշոր պատճառներից մէկն այն է, որ Թիֆլիսը 30 տոկոս աւելի է ջուր գործածում, քան առաջ։ Թիֆլիսում եղող լաղարէթները, անցնող զօրքը խոշոր քանակութեամբ ջուր են սպառում և օրական ստացած 1,600,000 դոյլ ջուրը Թիֆլիսի բաւականանալ չի կարողանում։ Հաստատուած է, որ յունիս ամսին Թիֆլիսն աւելի շատ ջուր է գործածում, քան այլ ամիսներին։ Իսկ այս տարի այդ պահանջը աւելի է մեծանում անձրևներ չլինելու պատճառով։ Ջուրը համահաւասար չափով չէ ստացւում բոլոր քաղաքամասերում այն պարզ պատճառով, որ ջրմուղը մի քանի քաղաքամասերում վաղուց է շինուած և նեղ է, իսկ միւս քաղաքամասերում նոր է շինուած և լայն է։ Վերջում Խատիսեանը կանգ է առնում Աւճալեան ջրմուղի հնութեան, պակասութիւնների վրայ և գտնում է, որ նա Թիֆլիսի նման քաղաքին լրիւ բաւարարութիւն տալ չի կարող։

Խօսում են շատ իրաւասուներ և բոլորն էլ այն կարծիքն են յայտնում, որ Աւճալեան ջրմուղը իր դերը կատարել վերջացրել է և որ Թիֆլիսին նա միւս փոխարինել չի կարող։ Միակ փրկութիւնը, շատերի կարծիքով, «Մոլկայի նախագծի» իրագործումն է։ Բոլորին այժմ պալլիատիւներն են հետաքրքրրում։ Այդ պալլիատիւներից է և ինժ. Վացաձէի՝ ջրմուղը նորոգելու համար ներկայացրած նախահաշիւը, որը ծախս է պահանջում մօտ մէկ և կէս միլիոն ռ.։ Դուման այդ նախահաշիւը յանձնում է տեխնիկական յանձնաժողովին։

Կցւում է այդ հարցին և ընդունւում իրաւասու Լուինկինչի դումային գիտած գրաւոր առաջարկը և ընտրւում է յատկապէս ջրի շուրջը եղած հարցերի համար մի առանձին յանձնաժողով։

### Սեփական բանւորների դիմումը

Ժուռնալի զեկուցում է, որ Թիֆլիսի ելեքտրաքարշի այն բանւորները, որոնք ծառայութեան են մտել մինչև սոյն տարւայ ապրիլի 1-ը, կանգութեան պատճառով օրական 90 կ. աւելի են ստանում։ Իսկ նրանք, որոնք ապրիլ 1-ից յետոյ են ընդունւել, ստանում են միայն 30 կ.։ Այդ նորերը դիմում են վարչութեանը և խնդրում իրենց ստացած 30 կ. հաւասարեցնել հների ստացած 90 կ. հետ։ Վարչութիւնը իր կողմից արդարացի է գտնում բանւորների դիմումը և առաջարկում է դումային համաձայնել ու թոյլ տալ անցած ամիսներն էլ հետը հաշւել։

Դուման այդ հարցը ընդունում է առանց վիճաբանութեան. Թ.

## ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Քաղաքների Միութեան Կովկ. բաժանմունքի լիազօրին հաղորդում են Խոյից, որ այնտեղի փախստականների համար բացւել է մի հիւանդանոց 50 մահճակալով։

✦ Ամերիկական կոմիտէի լիազօր բժիշկ Կրեսսին, որ եկել էր Կովկաս հայ փախստականներին բժշկական օգնութիւն ցոյց տալու համար, այժմ հիւանդութեան պատճառով մնում է Թիֆլիսում. առողջութիւնը վերականգնելուն պէս մեկնելու է Ալաշկերտ, ամերիկական սանիտարական խմբի գլխաւոր բժշկի պաշտօնով։

✦ Քաղաքների Միութեան Կովկ. բաժանմունքը որոշել է Երզրումում բաց անել մի հիւանդանոց՝ 950 մահճակալով։

✦ Նահանգապետների և շրջանների կառավարիչների տուած տեղեկութիւնների համաձայն, այժմ պետական նըպաստ ստացող փախստականների թիւն է՝ Դաղստանի շրջանում—53, Ստաւրոպոլի նահանգում, բացառութեամբ լեհերի—5,627, Երեւանի նահանգում, աշխատանքի անընդունակ—93,147, Սև-ծովեան նահանգ.—2,322, Գանձակի նահանգում—6,999, Ալաշկերտի հովտում, Խնուսից եկած տղամարդ—30, կին—350 և որբ երեխաներ—352, Դիադինի շրջանում—7,500 և Բայազէտի շրջանում—279։

# ԼՐԱՏՈՒ

## ԹԻՖԼԻՍ

Յունիսի 13-ին Կովկասի փոխարքային ներկայացաւ երկրագործական մինիստրութեան լիազօր Կ. Ի. Շաշկովսկին։

✦ Ստացանք Ժընևից պատճէնը այն ընդարձակ շրջաբերականի, որ «Դրօշակի» խմբագրութիւնը ուղղել է պետութիւններին ու եւրոպական մամուլին Տրապիզոնի կոտորածի առթիւ։

✦ Թիֆլիսում լուր է ստացւել, որ Դաթւանում, Համառուսական զեմստւոյական միութեան հիւանդանոցի սուր-վարակիչ հիւանդութիւնների բաժանմունքում աշխատող Մոսկւայի բժշկական ֆակուլտետի ուսանող Գէորգ Լիսիցեանը վախճանւել է բծաւոր տիֆից։

✦ Մեզ խնդրում են տպագրել, որ երաժիշտներ՝ Դ. Ղազարեան և Ե. Սարգարեան հայկական համերգային տուրնէ կազմակերպելու նպատակով, ճանապարհւեցին Բորժոմ, Ախալցխա, Ախալքալաք և այնտեղից հիւսիսային Կովկաս։ Տուրնէի նպատակն է՝ զարկ տալ հայկական ինքնուրոյն երաժշտութեան։

✦ Անցեալ օրը քաղաքագլուխը, վարչութեան անդամները և շինարարական մասի կառավարիչը դիտեցին Սոլոլակի տանելի աշխատանքները, որը աւարտւելու վրայ է, և որի բացումը նշանակւած է յունիսի 20-ին։ Քաղաքային վարչութիւնը դումա է մըտցնում առնելով ձրի երթեւեկելու մի առաջարկ։

✦ Թիֆլիսի կայարանին կից բացւած է մի տեղեկատու բիւրօ, որտեղից ճանապարհորդները ձրիաբար կարող են ճիշտ տեղեկութիւններ ստանալ մարդատար գնացքների երթևեկութեան ժամերի մասին. այնտեղ պէտք է ներկայացնել նաև ճանապարհորդների մնալու կամ մեկնելու ամսերը՝ կնիք խփելու համար։ Բիւրօն բաց է ամեն օր, առաւօտեան ժամը 8-ից մինչև գիշերւայ 11-ը։

✦ Քաղաք. վարչութիւնը Փոթիից տեղեկութիւն է ստացել, որ չնայած քաղաքի ալիւրավաճառների պահեստներում ամբարած շատ ալիւր կայ, բայց և այնպէս քաղաքի բնակչութիւնը գտնւում է հացի խիստ կարիքի մէջ։ Այդ հանգամանքն ի նկատի ունենալով, վարչութեան անդամ Չարարի առաջարկութեամբ՝ պարենաւորման գործի գլխաւոր լիազօր Շաշկովսկին հեռագրով կարգադրել է Փոթիի ոստիկանապետին՝ առեւտրականների ամբարած ալիւրը անմիջապէս գըրաւել և սահմանւած սակագնով վաճառել ազգաբնակութեանը։

✦ Պետրոգրադի միջազգային բանկի Կովկ. բաժանմունքը յունիսի վերջերին Արամեանի շէնքից տեղափոխւելու է Վոլժսկօ-Կամսկի բանկի նախկին շէնքը՝ Սոլոլակսկի փող., Էնֆիաճեանի տունը։ Ազգաբնակչութեանը դիւրութիւն տալու համար բանկի վարչութիւնը որոշել է Միքայէլեան պ. և Միջին փողոցում, Մանթաշեանի քարւանսարայում բաց անել բանկային գրասենեակներ։

✦ Նորին Մեծութեան Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնայի անուան Թիֆլիսի պահեստը մայիսի 20-ից մինչև յունիսի 9-ը զանազան անձերից ու հաստատութիւններից նուէր է ըստացել 22,749 ռ. 16 կ.։

✦ Յունիսի 12-ին Թիֆլիս է հասել 12 վագոն ալիւր և 7 վագոն շաքար, որը գնել է պարենաւորման գործի գլխաւոր լիազօր Շաշկովսկին։ Շաքարն ու ալիւրը յանձնւած են քաղաքային վարչութեանը ազգաբնակչութեանը բաժանելու համար։

✦ Ի նկատի ունենալով առևտրականների ծայր աստիճան շահագործումը գիւղերում, գիւղացիներ՝ Մ. Տէր-Դաւթեան, Մ. Արովեան, Ա. Հովիւեան և ուրիշներ խնդրամատոյց են եղել Թիֆլիսի նահանգապետի առջև, որ իրենց թոյլատրւի Բորչալուի գաւառի Ուզունլար գիւղում հիմնել մի սպառողական ընկերութիւն։

✦ Ոստիկանապետի քաղաքացիական մասի օգնական Կանդելակիի քաղաքից բացակայելու պատճառով, նրա պարտականութիւնները կատարում է 4-րդ թաղամասի պրիստաւ Դաշկովը։

## ԿՈՎԿԱՍ

Բագւից հեռագրում են, որ Նաւթարդիւնաբերողների խորհրդի արտակարգ համագումարը արդէն փակւել է։

✦ Բագւի Աղա Բաբա-Ղուլիեւի ալիւրի ակցիոներական ընկերութիւնը վերջին մի տարւայ ընթացքում զուտ արդիւնք է ստացել 318,276 ռուբլի։

## ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՒՃԱԼԱ (Թիֆլիսի գաւ.).— Մօտ օրերս անցայ Դիղմի գիւղով, որը Թիֆլիսից 16 վ. հեռաւորութեան վրայ է գտնւում։ Գիւղը գետակով բաժանւում է երկու թաղամասի՝ հայկական և վրացական։ Չնայած հայերի թւական առաւելութեան, սրանք չունեն ծխական դպրոց։ Մայրենի լեզուն ծայր աստիճան ողբալի դրութեան մէջ է գտնւում։ Ընտանիքներում և առհասարակ ամեն տեղ խօսում են վրացերէն։ Ժամանակ չէ՞ վերջապէս, որ թեմական իշխանութիւնը լուրջ ուշադրութեան դարձնէ այսպիսի շատ օտարախօս հայերի վրայ, որոնք զրկւում են իրենց մայրենի լեզուից, մնալով միմիայն անունով հայ։

Վ. Կզարմեան

ՂԱՄԱՐԼՈՒ.—Վանայ գաղթից յետոյ 12 տարեկան պատանի Սարգիս Ստեփանեան Մանուկեանց, Նորատուզ գիւղից (Վանայ շրջան), բախտի բերմամբ գալիս և բնակւում է Նախիջևանի շրջանի (Շերեմեթեւի կալւածք) հայ Սըմօ գիւղում։ Պատանի Սարգիսն անցեալ 1915 թւի սեպտեմբեր ամսին մի ինչ-որ գործով գալիս է մօտակայ Դաւալու հայ գիւղը, ուր իր գործը վերջացնելուց յետոյ ուզում է վերադառնալ Սըմօ գիւղը, բայց ճանապարհներին ծանօթ չլինելով՝ փոխանակ Սըմօ վերադառնալու, գնում է դէպի Բոյիկվեդի թուրք գիւղը։ Դեռ գիւղին չհասած՝ Սարգիսը պատահում է մի թրքուհու, որը հարցնում է պատանու ով լինելը։ Պատանին նախազգալով, որ իրեն կարող է մի որևիցէ վտանգ պատահել, դիմում է հետևեալ խորամանկ միջոցին. պատասխանում է, որ ինքը Տաճկաստանից գերի ընկած թուրք է, Հասան Աւգըլլա-օղլի անունով և խնդրում է թրքուհուց օգնութիւն։ Թրքուհին ոչինչ չկասկածելով՝ տանում ու յանձնում է Սարգսին համագիւղացի թուրք Արօ բէգ-օղլուն։ Վերջինս պահում է Սարգսին իր տան մէջ մինչև ինն ամիս տաւարածի պաշտօնով, առանց վարձի։ Մի քանի ամիս սրանից առաջ Արօ բէգի կովերը գողանում են և նա դատ է բաց անում, և իբրև վըկայ՝ ցոյց է տալիս իր հաւատարիմ նօքար Հասան Աւգըլլա-օղլուն (Սարգսին)։ Անցեալ մայիս ամսի 19 ին երրորդ մասի քննիչն իր հայ թարգմանի հետ գնում է Բոյիկվեդի թուրք գիւղը քննութեան գործերով, որտեղ պէտք է հարցաքննէին և Սարգսին Արօ-բէգի կովերի մասին իբրև վկայի։ Սարգիսը, տեսնելով, որ քննիչը ռուս է, իսկ թարգմանը հայ, օգտւելով հանգամանքից, յայտնում է, որ ինքը հայ է և պատմում է իր գլխին եկածը։ Թարգմանը պատանի Սարգսին վերցնելով իր հետ՝ յանձնում է Դաւալուի ուրեադնիկին, նա էլ յանձնում է Դաւալուի չորրորդ մասի պրիստաւին, իսկ վերջինս Սարգսին ուղարկում է Վերին Դարգալու գիւղը, ուր պատանին Սարգսին յանձնում են իր հօրեղբոր որդի Խաչատուր Մանուկեանին։ Մայիսի 31-ին նորից քննիչը պատանուն կանչել էր Ղամարլու, իբրև վկայի Արօ-բէգի կովերի մասին, այս անգամ ոչ թէ Հասան Աւգըլլա-օղլի, այլ Սարգիս Ստեփանեան Մանուկեանց ազգանունով։

Միխայիլ Բաբախանեան

ՇԻՆԱՀՈՂ (Ղափանի շրջան).— Աւելորդ չենք համարում մեր գիւղի երիտասարդ միութեան Բագւում ապրող անդամների ուշադրութիւնը հրաւիրել մեր գիւղացիների ներկայ ճգնաժամի վրայ. անհրաժեշտ է, որ նրանք անյապաղ ուղարկեն իրենց վճարելիքը։ Գիւղում ծով կարիք կայ, պակասում են ամենաանհրաժեշտ մթերքները։ Ընկերութիւնը ութերորդ տարին է, որ իր ոյժերի չափ, գիւղացիներին ցոյց է տալիս իր աջակցութիւնը. այսօր պէտք է կրկնապատկել այդ աջակցութիւնը։ Սիրում ենք յուսալ, որ այս կոչը պէտք եղած արձագանքը կը գտնի։

Գեսկար

# ԴՊՐՈՑԱԿԱՆ

## ԿՈՎԿԱՍԻ ԹԻՒՐՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի մէջ ներկայ եղող փախստական ուսուցիչները յաջորդական հինգ ժողովներում մէջ քննելով «Կովկասի Թիւրքահայ Ուսուցչական Միութեան» նախագիծ-ծրագիրը, յունիսի 12-ի նիստին մէջ ընտրեցին առժամեայ վարչութիւն՝ հետեւեալ եօթ անդամներէն և 3 անձնափոխանորդներէն՝ այբ բենական կարգով.

Գ.պ. Արսէն Հացագործեան, Արսէն Արծրունի, Արամ Շալճեան, Կիրակոս Երիցեան, օր. Համասփիւռ Միրզախանեան, օր. Սէրինէ Խրիմեան, պ. Սպիրիդոն ժամկոչեան (վարչութեան անդամներ), պ.պ. Ալէքսանդր Մկրտչեան, Խաչիկ Գէորգեան, Մաղաք Շալճեան (անձնափոխանորդներ)։

Միութեան վարչութեան յանձնարարւեցաւ խուզն յարաբերութեան մէջ մտնել Կովկասահայ Ուսուցչական Միութեան և կոմիտէի հետ, ինչպէս և այն միութիւններու կամ մարմիններու հետ՝ որոնք կը զբաղին գաղթականական դպրոցներու հոգացողութեամբ, թէ միութեան օրինականացման և թէ առաջադրւած ծրագրի իրագործման մասին խորհրդակցելու։

Միութեան ծրագրի և առաջարկների մասին յետոյ կանդրադառնանք։

Թոչեկ

# ՎՐԱՑ ԿԵԱՆՔ

## ԱՆ Ի «ԺԱՄԱՆԱԿԻՑ ՆԱՄԱԿՆԵՐ»-ԻՑ *)

Արիստոկրատիայի հակաբուրժուական ազդուժիւնը միայն վրաց իրականութեանը չէ յատուկ,—շարունակում է վրաց յայտնի հրապարակախօս Ան-ը,—այստեղ միայն նոր է կրկնւում այն, ինչ Եւրոպայում տեղի ունէր երկար ժամանակից ի վեր։ Օտտօ Բաուէրը գրում է.

«Ունեոր բուրժուազիայի և բուրժուական պետական կազմի դէմ արիստոկրատիան դաշնակիցներ է փնտրում ամենուրեք և գտնում միշտ այն դասակարգի մէջ, որը հակադիր տրամադրութիւն է ցոյց տալիս յիշեալ բուրժուազիային։ Անգլիայում պահպանողականները կողմնակից էին բանւորներին և օգնում էին նրանց՝ կապիտալի դէմ մղւած կռւում, որպէս զի դրանով հեռացնեն նրանց ազատամիտ կուսակցութիւններից։ Գերմանիայում իւնկերները և պրուսական սահմանադրական կոնֆլիկտի ժամանակ թագաւորը, աշխատում էին գրգռել բանւորներին ազատամիտ բուրժուազիայի դէմ։ Նոյնը տեսնում ենք և Աւստրիայում»։

Պէտք է աւելացնենք, որ մեծ յեղափոխութիւնից յետոյ Ֆրանսիայում, իսկ մինչ յեղափոխութիւնը Գերմանիայում, առաջ եկաւ մի ընդարձակ գրականութիւն, որ պաշտպանում էր արիստոկրատիան ընդդէմ բուրժուազիայի։

Պարզ է, վրաց կալւածատիրական արիստոկրատիան շահագրգռւած է վարկաբեկելու բուրժուազիան, խանգարելու նրա զարգացումը և այդպիսով պահելու իր գերիշխանութիւնը։ Այդ նպատակով նրա մի քանի ներկայացուցիչները սոցիալիզմից են խօսում, նոյն իսկ բանւորական շարժման կողմնակից յայտարարում իրենց, և այդ բոլորը նրանք անում են այն չափով ի հարկէ, որչափով այն ուղղւած է բուրժուազիայի դէմ։ Սակայն այդ կը լինի, Մարքսի խօսքերով որ ասենք, հասարակութեանը յետ դարձնող, ռէակցիոն, ֆէօդալական սոցիալիզմ։ Մեզ մօտ բուրժուազիան երկու տեսակ է. մանր, նացիոնալիստական, գիւղացիութիւնից ծնւած, և խոշոր, այլազգի, յատկապէս հայ, իր նացիոնալիստական մանր բուրժուազիայով։ Ուրեմն արիստոկրատիայի հակաբուրժուական ուղղութիւնը միևնոյն ժամանակ հակահայկական է և հակադեմոկրատական։ Եւ քանի որ արիստոկրատիայի գլխաւոր թշնամին ունևոր բուրժուազիան է, իսկ այդ մեզ մօտ այլազգի է, այդ պատճառով նացիոնալիզմի քօղումն է պարփակւում ազնուականութեան դասակարգային ձգտումները։ Ահա իրերի այդ դրութիւնն է, որ հարկադրում է նացիոնալիստական շրջաններին դուրս գալ և պաշտպանել ազնուականներին։ Այստեղ ամեն ինչ ազգի անունից է կատարւում։ Նացիոնալիզմի գլխաւոր առաջնորդի դերը ստանձնում է ազնուականութիւնը։

Եւ ահա այդ բոլորը լոյսի պէս պարզւեց զեմստւոյական խորհրդակցութեան ժամանակ։ Խորհրդակցական ժողովներին հայ բուրժուազիայի և վրացի-թուրք կալւածատէրերի մէջ առաջ եկած պայքարը իր սոցիալական իմաստով դասակարգային կռիւ է բուրժուազիայի և արիստոկրատիայի միջև։ Կռիւը նոյն ձևով կը տարւէր անպայման, եթէ հայ բուրժուազիայի փոխարէն վրաց բուրժուազիա լինէր, որովհետև բոլոր ազգերի բուրժուազիայի սոցիալական քաղաքականութիւնը միանման է։ Վրաց բուրժուազիան եւս նոյնպէս կը պահանջէր վերացնել ազնուականութեան կուրիան, քաղաքները առանձին միաւոր կը ճանաչէր, ցենզը ըստ հարկի կը սահմանէր և այլն։ Իսկ ինչ վերաբերում է տէրրիտօրիայի նկատմամբ նացիոնալիստական չափանիշի կիրառման՝ պէտք է ասել, որ հայերը այդ չեն կը պահանջել (ընդգծումը մերն է. Ա. Թ.) Վրաստանի վերաբերմամբ։ Մի խօսքով խորհրդակցութեան ժամանակ իրար քաղխւեցին երկու դասակարգի իդէոլոգիան և ոչ երկու ազգերի։ Գիւղի արիստոկրատիան և քաղաքի բուրժուազիան ճիգեր թափեցին և ցանկացան իրենց սոցիալական սկզբունքները կեանքի մէջ իրականացնել։ Եւ պարզւեց մի զարմանալի երևոյթ. վրաց տիրապետող իդէօլոգիան իրականօրէն արիստոկրատիայի – կալւածատիրական դասակարգի իդէօլոգիա է եղած։ Եռանդուն պաշտպան, որոշակակից չունեցաւ նացիոնալիստական բուրժուազիան։ Խորհրդակցութեան կողմից առաջադրւած զեմստւոյական կանոնադրութիւնը շղթայում է թէ հայ և թէ վրացի բուրժուազիային։ Վրաց խաւութիւնը Իմէրէթում միանման անցնում են գիւղական կալւածատէրերի ձեռքը և նրանք այդ քաղաքները օգտագործում են ըստ իրենց հայեցողութեան և շահերի։ Այդ նշանակում է՝ բուրժուազիայի վրայ տէր կանգնեցնել կալւածատէրերին, արիստոկրատիային։ Այդ նշանակում է Վրաստանը կուլտուրապէս յետ քաշել, նացիոնալիստական խոշոր բուրժուազիայի և խոշոր արդիւնաբերող դասակարգի զարգացման առաջ խոչընդոտ հանդիսանալ։

Ա. Թ.

*) Տես «Հորիզոն», № 130.

# ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

«Tribune de Genève» լրագիրը լաւագոյն աղբիւրներից իմացել է, որ գերմանական գլխաւոր շտաբը Վոլինի նահանգի հիւսիսային մասն է ուղարկել հետեւեալ ռեզերւները. 35,000 հոգի Բելգիայից, 20,000 հոգի Էլզասի հարաւային մասից, 30,000 հոգի Դրոզնօի պահեստից, 10,000 հոգի Կեօնիգսբերգի բերդապահ զօրքից։ Այս գրեթէ 100,000 զօրքի հետ շուտով կը միանան երկու կորպուս, որոնք շտապով կազմւում են երկրի ներսը։

— Բուխարեստից հաղորդում են, որ Լւովը պաշարողական դրութեան մէջ է յայտարարւած։ Բոլոր բնակիչները դուրս են հանւած խրամատներ փորելու համար։ Լւովի պաշտպանութիւնը անհրաժեշտ է ճանաչւած ոչ թէ ռազմական, այլ քաղաքական նկատումներով։

— Ստոկհոլմի «Swen. Dagblat»-ի թղթակիցը գրուցատրութիւն է ունեցել աւստրիական ընդհանուր շտաբի կառավարիչ, այժմ այդ պաշտօնից արձակւած գեն. Հեացենդորֆի հետ։ Վերջինս ասել է, թէ ինքը վաղուց գուշակել էր, որ ռուսները կարող են յարձակման դիմել, բայց գերմանական գլխաւոր շտաբը, որ իրապէս իր ձեռքն է առել աւստրիական բոլոր գործողութիւնների ղեկավարութիւնը, վճռապէս անհնարին էր գտել ռուսների յարձակումը։ Գերմանական ռազմագէտները դեռ եւս մարտ ամսին գիտեին աւստրիական ամրութիւնները, գտել էին, որ դրանք անառիկ են, մանաւանդ որ ռուսները նրանց կարծիքով, բաւարար չափով տեխնիկական պատրաստութիւններ չունէին, հետևաբար Բրուսիլովի մեքենան անգամ չի անցնիլ հարաւում գրոհ տալու աւստրիական գիծը պատռելու ապարդիւն նպատակով։ Այս եզրակացութեան հիման վրայ Վիլհելմը միտք էր յղացել ստիպել աւստրո-հունգարացիներին յարձակման դիմելու իտալական ճակատի վրայ, փոխադրելով այդտեղ զօրքերի մի մասը ռուսական ճակատից։ Հետեւանքն եղաւ այն, ինչ որ նախագուշակել էր Հեացենդորֆը։

— Ջերնովիցի բերդապետ գընդապետ Միխայիլ Պապը ձերբակալւած է Լւովում և զինւորական դատի է յանձնւում։

— Զւիցերական թերթերի մէջ տպւած է գերմանական աղբիւրներից մի տեսութիւն պատերազմի դրութեան մասին։ Այդ տեսութեան մէջ ասւում է. Ռուսաց յարձակումը ցոյց տւեց, որ ժամանակակից պոզիցիոն պատերազմը վերջ ի վերջոյ լուծւում է բաց դաշտի կռւով։ Ռուսաց զօրքը, որքան էլ բազմաթիւ լինին նրանք, կատարելապէս վարձատրւում են ձեռք բերած հետեւանքով։ Եթէ գերմանացիները, ծերունի Մոլտկէի ծրագրի համաձայն, պատերազմի հենց սկզբբից փորձէին պատռել գիծը Վերդենի մօտ, առանց նկատի առնելու զոհերի թիւը, աչքադութիւն անչափ մեծ կը լինէր և անցքերը

digitised by A.R.A.R.@

բոլորովին այլ ընթացք կըստանա-յին։ Նուտով կրակի փորձութեան ժամը պիտի հասնի նաև Գերմա-նիայի համար, և ով ուզում է յաղթել, նա պէտք է, առանց նայելու մարդկային զոհերին, ա-ռաջ անցնի աւելի՝ քան մինչև այժմ։ Մարդկութիւնը պէտք է նախապատրաստուի այդ բանի հա-մար, որովհետև ժամանակակից պատերազմը խնայել չգիտէ։

— «Բէչ»-ին Լոզաննից հե-ռագրում են, որ այնտեղ է գնա-ցել «Միութիւն և Ցառաջադիմու-թիւն» կուսակցութեան նախկին պարագլուխ, Թիւրքական պարլա-մենտի անդամ Ահմէդ-Ռիզա-բէյը։ Լոզանի հայկական շրջաններում ասում են, որ Թիւրք կառավա-րութիւնը կրիտիքական դրութեան մէջ գտնելով, Ահմէդ-Ռիզա-բէ-յին ուղարկել է իբրև միջնորդ բանակցելու համար Թիւրքական օպպոզիցիայի Զւիցերիա փախած ներկայացուցիչների հետ։

— Որովհետև Յունաստանը ընդունել է դաշնակիցների վերջ-նագրի բոլոր պահանջները, վճռ-ւած է վերացնել նաւապաշա-րումը։

— Հաղորդում են, որ Ռումի-նիայի մինիստր-նախագահ Բրա-տիանուն Թողնում է իր պաշ-տօնը։

— Բուխարեստից հաղորդում են, որ Վիլհելմը, իբր թէ դժգոհ լինելով Հինդենբուրգից, նրա տեղ նշանակել է Մակենզենին։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 13 յունիսի

Ռումանիոյ մէջ ապրող քեմախցի հայերու Հայրենակցական Միութիւնը իր ջերմ պատրաստակամութիւնը կը յայտնէ նիւթապէս օգնութեան հասնելու այն բոլոր քեմախցիներուն, որոնք կը գտնուին Կովկասի կամ Թիւրքական գրաւեալ հողամասերու մէջ և այդ մասին իմ միջոցով կը հաղորդէ վերոյիշեալներուն ի գիտութիւն։

Ամենայն սիրով կը կատարեմ այդ յանձնարարութիւնը և կը խնդրեմ Կովկաս կամ Թիւրքիա գտնուող քե-մախցիներէն, որ փութան իրենց մա-սին մանրամասն տեղեկութիւններ հաղորդեն ինծի՝ «Հորիզոնի» խմբա-գրութեան հասցէով։

Լիպարիտ Աւետիսեան

Խմբագիր՝
Ս. ՄԱՀԱԿԵԱՆ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԼՍԵՑԷ՛Ք

Ամեն մի նոր աշխարհում ու շրջանա-կում, ամեն մի նոր ծանօթի կամ ար-ղէն բարեկամի, կամ... այս ու այն սեմեգուկ ուղեղի և ողջատ ու 90 հոգիի առաջ ով գիտէ հրջանըրորդ անգամ բացատրելու կամ հակաճա-ռելու անտանելիօրէն անտանելիու-թիւնից ազատւելու համար մի անգամ ընդմիշտ՝ այսօր, ես յետ եմ վերցնում իմ նախկին յայտարարութիւնը, որ ժամանակին արել եմ «Աշխատանքն»-ում (Վան)։

Թիֆլիս — Արամ Սէկցեան
813 1—1

**Փնտրում է** Առաջին բանակի կամաւոր, Բիմա-խի Բ. զարմ գիւղացի Սահակ Թէհ-լիրեան։ Կը խ. դրենք, որ ինքը բա-րեհաճի և կամ նրա հասցէն իմացող-ները լուր տան հետեւեալ հասցէին.

Թաթարկի մէյդան, Զայնայա զա-ւեգնիա, Սահակ Աւագով։

Խաչիկ Վարդանեան
810 2—1 Խոսրով Ալիխեոխանեան

**ՄՇԵՑԻ** Բրոռ Թաղից, Թա-թանճի Մուրադի Վար-դանի տղայ Թաւրով, պատերազմից առաջ ապրում էր Ամերիկա, քաղաք Պրովիդենս, փողոց Այէտա-րիտ, համար 439։ Խնդրում ենք տեղեկ իմացողներից, յայտնեն Երեւան, իրեն եղբայր Ռուբէնին, որը նոր եկել է Մուշից, հետեւեալ հասցէով. Երեւան, Կոնդ, Թափարաչսկի փողոց, № 21, յանձնել Սրբուհի Թանիկեանին, կամ Ռուբէն Վարդանեանին։ 811 1—1

**ՏՐԻՊԵՐ** (ՍՈՒՍՈՒՆԱԿ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ)

պ. պ. բժիշկներն ու մասնագէտները առաջարկում են որպէս նոր, արմատական և կատարելագործած միջոց սուր և տեւական սուսուլ-նակի դէմ, ինչպէս նաև նրա ամեն տեսակ բարդութիւնների ու հե-տեւանքների ժամանակ, այն է միզախողովակի, միզապարկի, գեղձերի բորբոքման, [illegible]

№ 765 „Ա“ ԿԱՊՍՈՒԼՆԵՐԸ ՅԱԿՈԲԵԱՆԻ

[illegible]

✦ ✦ ✦ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ ✦ ✦ ✦

3 ռուբլի նախավճար ստանալուց յետոյ։ Լիակատար բժշկւելու համար հարկաւոր ԿԸ ԼԻՆԻ 4-ԻՑ ՄԻՆՉԵՒ 6 ՏՈՒՓ ԿԱՊՍՈՒԼ. Թէ պատւէրները և թէ նամակները ուղարկել Կովկասի միակ ներկայա-ցուցչին՝ **Е. М.-Акопову,** ТИФЛИСЪ, Красногорская, 3, близъ пам. кн. Воронцову, [illegible] 9-ից մինչև երեկոյեան 8 ժամը։ [illegible] երեկոյեան ժամը 5—7։

Ներկայացուցչ. բաժանմունք, միայն տեղական հիւանդների համար՝ БАКУ, Красноводская ул., № 52, А. А. Мазаянъ. 996 8—7



**ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԳԻՒՏԸ**

Վերադարձրեց նրան իր ոյժերը, կայտառութիւնը և տղամարդու-թիւնը, երբ բժշկական գանազան միջոցներն և ոչ մի գեղ չօգնե-ցին։

[illegible]

**Ստիմուլօլը.** [illegible]

Դոկտ. Ժակ Լերու-Սինօ

[illegible] «Institut D-r Calvet Paris», [illegible]

[illegible] **Институтъ Д-ра Кальве, Тифлисъ, Эриванская площ., Пушкинская 3, отд. I верхній этажъ д.Кредитнаго О-ва** [illegible]

701 0—2

— ԱՄԵՆԸ—ԱՍԵՂԻ—ՀԱՄԱՐ —
Ձեզ հարկաւոր են մոդայի ժուռնալ-ներ։ Ձեզ հարկաւոր են գրքեր ձեռ-նարկութեան, ձեռի համար ձեռնոցներ, պորտ մոնէներ, չափեր, տարազներ, ան-կիւնաչափեր, սանտիմետրներ և այլն. բոլոր տեղեկութիւնները կու-ղարկեմ անվճար։ Ցայտնեցէք ձեր և ձեր ծանօթների հասցէները. Յ. Х. Левитанусъ, Харьковъ. 965 10—8

Լոյս տեսան և վաճառւում են
Յ. ԽԱՆԼԱՐԵԱՆԻ
**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ**
ԳԻՆՆ Է 50 Կ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» և «Գուտտեն-բերգ» գրախանութներին։ 800 3—3

**ՆՈՐ ՄԻՋՈՑ**

**ԲՈՐՕ-ՆԱՒԹԱԼԱՆ**

Բոլորովին ոչնչացնում է գլխի քոսը, ամրաց-նում է մազերը, օգնում է աճելու բանտոկը, ջա-լիս է մազերին քնքոյշ մի տեսք ու տալիս է գլխին փայլ։

Պայտարւած է բժշկական վարչութիւնից, որպէս նա-սակար նիւթեր չպարու-նակող մի միջոց։

Պահեստ Կովկասեան Ըն-կերութեան դեղավաճառա-նոցում, նրա բաժանմունք-ներում, Բաքու, Բաթում և Ռուսաստանի բոլոր դեղա-վաճառանոցներում։
1033 10—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է
**ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ**
Օպերետ 4 գործողութեամբ. Ու. Բ. Հաջիբէկովի, Թարգմ. Ա. Վ.
Գինն է 50 կ., դիմել «Գուտտենբերգ», «Գիր» և Թառայեանի գրավաճառա-նոցներ։ Պահեստը «Գուտտենբերգ»-ի մօտ, ուր պիտի դիմեն գաւառից առնողները։
758 3

## ՏՐԻՊՊԵՐ

Ով ցանկանում է մի անգամ ընդ միշտ ազատւել այս ծանր հիւան-դութիւնից, ԶԳԷՑԷ՛ Է ՄՈՌԱՆԱՑ, որ կայ միջոց,—և այդ գերմա-նական մի-ջոցն է,— „ԳՈՆՈՋԱՆ“ կապսիւլները, որով դուք կարող էք ազատւել մի քանի օրւայ ընթաց-քում ամենահին տրիպպերից անգամ։

Այդ միջոցը փորձել են Թիֆլիսի, Ռուսաստանի և արտասահ-մանի բոլոր բժիշկներն ու պրոֆեսորները, և ճանաչւած է որպէս ա-ռաջինը եղածների մէջ։

— ՄԵՐ ԽՐԱՏԽԻՔԸ —

Եթէ Ձեզ համար դժւար չէ, խնդրում ենք հարցրէք ինչ բժշկի որ ուզում էք «ԳՈՆՈՋԱՆ» կապսիւլների մասին, և նրանք ձեզ ան-պայման կը յանձնարարեն այդ կապսիւլները։ Այս միջոցը կիրառե-լի է թէ տղամարդկանց և թէ կանանց համար։ Ապաքինւելու համար բաւ փող մի ծախսէք, որովհետև ամբողջ կուրսը ընդունելուց յետոյ վերջնականապէս դուք կը բժշկւէք։ Զկարծէք, թէ այս ռեկլամ է, այլ փաստ։ Խնդրում ենք չչփոթել այլ պատենտաւոր միջոցների հետ, որոնց բժիշկները երբէք չեն յանձնարարում հիւանդներին։

Ամբողջ կուրսն արժէ 22 ռ. կարելի է և կէս կուրսով—11 ռ.։

Օտարաքաղաքացիներին ուղարկւում է 3 ռ. կանխավճար ստա-նալուց յետոյ։ Նամակներով և պատւէրներով դիմել բացառապէս՝ Р. Я. ШМИДТЪ, ТИФЛИСЪ, ТХИНВАЛЬСКАЯ, № 12, Ռ. Շմիդտ, Թիֆլիս, Թխինւալսկի փ. 12, Մեծեկոյ փողոցով, Գոլովինսկի պր. մօտիկ. ընձամբ ամեն օր ժամը 2-ից մինչև 6-ը երեկ.։ Վաճառը ամբողջ օր։ Դեղավաճառներին և դեղագործներին զեղչ։
1011 10—3

## ԳՈՆՈՐՐԷՈՎ-ՏՐԻՊՊԵՐՈՎ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

որոնք անհագին քանակութեամբ փող և ժամանակ են վատնել անհետեւանք իրենց հիւանդութիւնից բժշկւելու համար, այժմ լիակատար հնարաւորութիւն ունին վերջնականապէս ազատւել նրանից, կիրառելով գիտնակա-կանօրէն—կատարելագործած ֆրանսիական պրեպարատ

### ՊՐՈՖ. ՄՈՐՆԻ ԲԼԵՆՈՋՈԼԸ

[illegible]

Բլենոզոլի մի տուփի գինն է 3 ռ.։ Ամբողջ կուրսը 3-ից մինչև 5 տուփ։ 952 0—11

«ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ»-Ի ԿՈՂՄԻՑ ՓՆՏՐՒՈՒՄ ԵՆ

**ԲԻԹԼԻՍ** Աղնիւ Մուրադեանը փնտրում է իր եղբայր-ները—Գասպարեաններ՝ Լեւոն, Հմայեակ և Արեշատ, եղբօր կինը—Գրաբիոն և իր տղաները—Գարգեն, Անուշաւան և Իգնատիոս։

**ԳԱՒԱՇ** Ընձակ գիւղից Տէր-Թով-մաս քահանան, որ Բերկ-րիի կուի և չփոթութեան մէջ կորսւել է իր եղբօր վրայ։ Փնտրողը հենց եղ-բայրն է—Աւետիս։

**ԱԼԱՇԿԵՐՏ** Տիգրան Մխիթար-եան Գեւորգեանց։ Փնտրողներն են՝ կինը—Սանամ, մայ-րը— Սանամ, եղբայրը—Մելիք են։

**ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ** Թամ-զարա գիւղից Իբրանոսեան եղբայրները—Անդրանիկ, Արգար և Գառնիկ, որոնք, իբր թէ, Սարիկամիշի կուին անցել են արտասահման։ Փնտրողը նրանց եղբայրն է—Սեպուհ։

Ցայտնել. Թիֆլիս, Բեբուտովսկայա № 30, «Տեղեկատու Բիւրօ»։

Վրիպակ.—«Հորիզոն»-ի № 126-ի մեր յայտարարութեան մէջ՝ որբերից՝ Վար-դանիկ Ցարոյեանը (Վան—Պէռդանց) պէտք է լինի Շարոյեան։ 812 1—1

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԿԱՄ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ

են ուզում Նուխւայ հայոց երկսեռ երկդասեան դպրոցի համար.—1) Հայոց լեզւի եւ պատմութեան եւ բնագ. ուսուց. 2) Ռուս լեզւի, պատմութեան եւ աշխարհագր 3) Իւսւց նութեան եւ բնագիտութեան. 4) Աշակեր. բեան։ Այս վեր-ջինը պիտի գիտենայ [illegible]

Բանակցութիւնների համար դիմել Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻՆ, Թիֆլիս, Гановская, 9, кв. Мелхазяна։ Դիմումը մինչև ամսիս վերջը, ժամը 10—12 և 5—7։
814 2—1

Յ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
«Արշին մալչու» դերում

## Т-во ГРАММОФОНЪ

ВЛАДѢЛЬЦЫ
**АБГАРОВЪ и АГАДЖАНОВЪ**
**Эриванская площадь**

ՄՕՏ ՕՐԵՐՍ ԿԸ ՍՏԱՑՒԵՆ
ԻՍԿԱԿԱՆ
# ԱՐՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆԻ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ
(Երաժշտութիւն և խօսքեր Ս. ՄԱՂԱԼԵԱՆԻ)

Երգում է ամենից յաջող Ասկեարի դերը կատարող (Արշին-մալչի)
**Յ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ**

Փորձնական պլաստինկաները ստացւած են, ցանկացողները կարող են լսել անվճար
1006
0—2


[illegible]

Дозв. воен. ценз.

Типографія „МАМУЛЪ“, Лорисъ-Меликовская ул. № 22.

digitised by A.R.A.R.@